† Տ. ԸՆՁԱԿ ՎԱՐԴ. ԵԱՂՃԵԱՆ

Երկարատև, ծանր հիւանդութիւնից (բարակացաւ) յետոյ իւր մահկանացուն կնքեց Խրիմի ս. Խաչ վանքում, որի վանահայրութեան պաշտօնն էր վարում 1912 թուից, մայիսի 3 ին Մայր Աթոռի միաբան Տ. Ընձակ վարդապետը։ Ծնուած է 1876 թ. Ալէքսանդրապոլում. սովորել է իր հայրենի քաքաքի ս. Փրկչի երկդասեան դպրոցում և աւարտել է 1891 թ.։ Մկրտիչ Ա. կաթուղիկոսի օրօք 1895 թ. ընդունուել է Մայր Աթոռի միաբան, կուսակրօն քահանայ է ձեռնադրուել 1901 թուին։ Վարել է հետևեալ պաշտօնները՝ Մայր Աթոռի Տպարանի վարչութեան անդամութիւն, Ախալքալաքի գործակալութեան, Սալմաստի փոխանորդութեան, Շամախու կոնսիստորիայի նախանդաթեան և Սաղիանի վանքի վանահայրութեան, Մանջուրիայի հայերի հոգևոր այցելուի, Ալէքսանդրապոլի փոխանորդութեան և վերջը Խրիմի ս. Խաչ վանքի վանահայրութեան։

Հանգուցեալը ընդունակ միաբաններից էր և ինքնաշխատութեամբ բաւական յառաջադիմեց. եկեղեցական արարողութիւնների նախանձախնդիր էր ու շուքով կատարող։ Մայր Աթոռը զրկուեց իւր երիտասարդ միաբաններից մէկից եւ։

Տէրը լուսաւորէ հանգուցեալի հոգին։